ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 ՀՈՒԼԻՍԻ 2020թվականի N 57-Ա

<<ԻՆԿՐԻՊՏ>> ՍՊԸ-ԻՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի պահանջով և հիմք ընդունելով <<Ինկրիպտ>> ՍՊԸ-ն տնօրեն Է.Ներսիսյանի 26.06.220թ. թիվ Ի-069-01 գրությունը՝ որոշում եմ.

1.Թումանյան քաղաքի ինտերնետային կապը բարելավելու նպատակով թույլատրել <<Ինկրիպտ>> ՍՊԸ-ը Երևանյան խճուղում օպտիկամանրաթելային գծի անցկացման համար տեղադրել հենասյուն, պահպանելով շինարարական նորմերը ու կանոնները՝համաձայն հատակագծի:
2. Շինարարական աշխատանքների կատարման թույլտվության համար համայնքապետարանի 900265123266 հաշվեհամարին փոխանցել 15000 դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 ՀՈՒԼԻՍԻ 2020թվականի N 58-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 42-րդ ,43-րդ հոդվածներով ,ՀՀ Հողային օրենսգրքի 48-րդ,76-80-րդ հոդվածներով,հիմք ընդունելով Թումանյան համայնքի ավագանու 13/05/2020 թվականի թիվ 26-Ա որոշումը և աճուրդային և մրցույթային հանձնաժողովի 29.06.2020 թվականի թիվ 4 արձանագրությունը՝
որոշում եմ.

1.Թումանյան համայնք,ք.Թումանյան,5-րդ փողոց,թիվ 3/9 հասցեում գտնվող 0.01553 հա մակերեսով ընդհանուր օգտագործման հողամասը 36000 դրամ տարեկան վարձավճարով 99 տարի ժամկետով տրամադրել մրցույթի հաղթող Սվետլանա Մաքսիմի Շահվերդյանին:
2.Հողամասերի նկատմամբ սահմանափակումներ չկան,հողամասն ընդգրկված է ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերում:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հողամասի կառուցապատման իրավունքի պայմանագիրը կնքելու պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ՋԱՎԱՐՅԱՆ